ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Սույն ընդհանուր դրույթները և պայմանները սահմանում և կարգավորում են «ԱՐՍՍՈՒՍ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ նաև՝ Ընկերություն) պատկանող կայքով (այսուհետ նաև՝ Կայք) Ընկերության կողմից վաճառվող ապրանքների վաճառքի (այսուհետ նաև՝ Վաճառք) հետ կապված իրավահարաբերությունները:

- Մուտք գործելով Կայք, օգտագործելով Կայքի ցանկացած ծառայություն կամ ներբեռնելով ցանկացած բովանդակություն՝ ամբողջությամբ կամ դրա մի մասը Դուք, որպես օգտագործող (այսուհետ նաև՝ Օգտագործող, Դուք, Ձեզ, Ձեր, Հաճախորդ, Գնորդ, Պատվիրատու) հաստատում եք, որ ամբողջությամբ կարդացել և հասկացել եք սույն օգտագործման պայմանները, ինչպես նաև Կայքում հրապարակված Ընկերության կողմից Վաճառքի այլ պայմանները, հրապարակային մատակարարման պայմանագրի դրույթները (այսուհետ նաև՝ Պայմանագիր) և անվերապահորեն ընդունում եք դրանք, անկախ նրանից՝ Դուք Ընկերության կողմից իրականացվող Վաճառքի հաճախորդ եք, Կայքի գրանցված օգտագործող, թե՝ ուղղակի այցելու:

- Ընկերությունն իրավունք ունի առանց նախապես ծանուցման, միակողմանի, ցանկացած պահի փոփոխել սույն Պայմանները: Դրանց փոփոխության դեպքում Ընկերությունը կհրապարակի նորացված Պայմանները ինտերնետային Կայքում՝ նշելով վերջին փոփոխության ամսաթիվը: Օգտագործողի պարտականությունն է ժամանակ առ ժամանակ այցելել Կայք և ստուգել Պայմանների փոփոխությունները: Ընդ որում՝ նոր Պայմանները իրավական ուժ կունենան և կտարածվեն, դրանք Կայքում տեղադրելուց հետո ծագած պարտավորությունների վրա:

- Եթե Դուք համաձայն չեք սույն Պայմաններին, խնդրում ենք դադարեցնել Կայքի օգտագործումը: Կայքում գտնվելը, հաշիվ բացելը, Օգտագործող դառնալը և Ծառայություններից օգտվելը փաստում են Ձեր կողմից սույն Պայմանների անվերապահ ընդունումը:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

- Կայքում գրանցվել կամ գնում կատարել կարող են քաղաքացիաիրավական գործունակություն ունեցող 18 տարեկանը լրացած անձիք: 18 տարեկանը չլրացած կամ անգործունակ (դատարանի կողմից այդպիսին ճանաչված) անձանց կողմից կատարված գործողությունների հետևանքների համար Ընկերությունը պատասխանատվություն չի կրում:

- Անձնական տվյալների լրացումը կարելի է իրականացնել միայն գրանցվող կամ գնում կատարող օգտատիրոջը փաստացի պատկանող տվյալներով: Համաձայնվելով սույն պայմաններին, Դուք ընդունում եք, որ Ընկերությունը չի կարող ստուգել Ձեր տված տեղեկությունները և տվյալները, այս կետում տրված Ձեր հավաստումների իսկությունը, ուստի սույն կետի յուրաքանչյուր խախտման ամբողջական պատասխանատվությունը ընկնում է Ձեզ վրա:

- Ընկերությունն իրավունք ունի սխալ կամ ոչ հավաստի տվյալներ ներկայացված լինելու փաստ հայտնաբերելու դեպքում հեռացնել օգտվողին համակարգից՝ զրոյացնելով կուտակած միավորները և կատարած գնումների պատմությունը:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՌԱՔՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- Ընկերությունը իր հաճախորդներին վաճառում է ապրանքներ (այսուհետ նաև՝ Ապրանք) և կատարում առաքում նշած հասցեով:

- Օգտագործողը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ընկերությանը, եթե վստահ է, որ իր Հաշվով կատարվել է չթույլատրված մուտք: Նման դեպքում Ընկերությունը իրավունք ունի անմիջապես արգելափակել Հաշիվը՝ մինչև հանգամանքների ամբողջական պարզումը: Ամեն դեպքում Ընկերությունը չի կրում ոչ մի պատասխանատվություն այլ անձանց կողմից

Օգտագործողի Հաշվով կատարված գործողությունների համար: Այդ գործողություններով Ընկերությանը կամ երրորդ անձանց պատճառված վնասի համար պատասխանատվություն է կրում Օգտագործողը:

- Ընկերությունն կարող է այն ժամանակահատվածում, երբ պատվերների ընդհանուր ծավալը մեծանում է (տոնական օրեր, զեղչային ծրագրեր կամ միջոցառումներ և այլն) կամ առաջանում են տեխնիկական (խցանում, ավտովթար և այլն) կամ բնածին խոչնդոտներ հետաձգել պատվերների առաքման ժամկետները:

ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- Ապրանքի գնման հայտը ստանալուց հետո Ընկերության սպասարկման բաժինը հավելյալ ստուգում է տվյալ ապրանքի վաճառքային տեսքը և ֆիզիկական կամ մեխանիկական վնասվածքների բացակայությունը: Եթե գնված ապրանքը չի համապատասխանում վաճառքային տեսքին, առկա են ֆիզիկական կամ մեխանիկական վնասվածքներ, ապա ապրանքի փոխարինման կամ պատվերի չեղարկման համար Ձեզ հետ կապ է հաստատում Ընկերության սպասարկման կենտրոնի աշխատակիցը:

- Եթե Գնորդը գնման հայտում նշել է, որ կատարելու է կանխիկ վճարում, և նշված հեռախոսահամարով չի պատասխանում սպասարկման կենտրոնից ստացված հեռախոսազանգին, ապա Ընկերությունը իրավասու է Ապրանքը չփոխանցել առաքման և չեղարկել գործարքը:

- Եթե Գնորդը կատարել է օնլայն վճարում և նշված հեռախոսահամարով չի պատասխանում սպասարկման կենտրոնից ստացված զանգին, ապա Ընկերությունը իրավասու է Ապրանքը չփոխանցել առաքման, իսկ հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում սպասարկման կենտրոնի հետ կապ չհաստատելու դեպքում չեղարկել գործարքը՝ հետ վերադարձնելով ամբողջ գումարը:

- Գնորդի կողմից պատվերի հաստատման դեպքում առաքանին փոխանցվում է առաքիչին:

- Եթե Գնորդը կատարել է օնլայն վճարում և առաքանին առաքիչին հանձնելուց հետո փոխվում է առաքման հասցեն, ապա Ընկերությունը իրավասու է առաքանին Գնորդին հանձնելու ժամանակ կանխիկ եղանակով գանձել հավելյալ առաքման գումար՝ մեկ ամբողջական առաքման գումարի չափով, իսկ հավելյալ գանձված գումարի կտրոնը Գնորդը կարող է ստանալ ք. Երևան, Կ. Ուլնեցի 70 հասցեում գտնվող սպասարկման կենտրոնից կամ էլ. փոստի միջոցով:

- Առաքիչը կարող է հեռախոսազանգի միջոցով լրացուցիչ կապ հաստատել Գնորդի հետ հասցեի կամ այլ մանրամասների ճշգրտման նպատակով: Եթե գնորդը նշված հեռախոսահամարով չի պատասխանում առաքիչի հեռախոսազանգին կամ առկա են նմանատիպ այլ առաքման իրականացման խոչնդոտներ, ապա առաքիչը իրավասու է պատվերը հետ վերադարձնել սպասարկման կենտրոն:

- Եթե Գնորդը կատարել է օնլայն վճարում և նշված հեռախոսահամարով չի պատասխանում առաքիչի զանգին կամ առկա են նմանատիպ այլ առաքման իրականացման խոչնդոտներ, ապա առաքանին սպասարկման կենտրոն վերադարձվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնորդի կողմից սպասարկման կենտրոնի հետ կապ չհաստատելու դեպքում Ընկերությունը իրավասու է պատվերը համարվել չեղարկված և հետ փոխանցել ամբողջ գումարը բացի առաքման գումարից:

- Գնորդի կողմից նշած հեռախոսահամարով առաքիչի հեռախոսազանգին չպատասխանելու կամ Գնորդի պատճառով առաջացած նմանատիպ այլ առաքման իրականացման խոչնդոտների

առկայության պատճառով, առաքանին սպասարկման կենտրոն հետ վերադարձնելուց հետո կրկին առաքման իրականացումը համարվում է կրկնակի, և Ընկերությունն իրավասու է գանձել կրկնակի առաքման գումար:

- Գնորդը պարտավոր է առաքանին ընդունելու պահին, առաքիչի ներկայությամբ ստուգել առաքված ապրանքների պատշաճ որակի համապատասխանությունը, հնարավոր ֆիզիկական և մեխանիկական վնասվածքները և սարքինությունը: Եթե առաքված ապրանքներից որևէ մեկը չի համապատասխանում պատշաճ որակի, առկա են ֆիզիկական կամ մեխանիկական վնասվածքներ կամ գտնվում է ոչ սարքին վիճակում, ապա գնորդը կարող է հրաժարվել ինչպես միայն տվյալ ապրանքից, այնպես էլ ամբողջ առաքանուց և առաքման ծառայությունից կամ պահանջել նոր կամ փոխարինող ապրանք:
- Եթե առաքված ապրանքներից որևէ մեկը պատշաճ որակի չէ, առկա են ֆիզիկական կամ մեխանիկական վնասվածքներ կամ գտնվում է ոչ սարքին վիճակում, ապա փոխարինում պահանջելու դեպքում գանձվում է միայն մեկանգամյա առաքման վճար:
- Եթե գնորդը կատարել է օնլայն վճարում և առաքված ապրանքները պատշաճ որակի են, չունեն ֆիզիկական և մեխանիկական թերություններ և գտնվում են սարքին վիճակում, սակայն Գնորդը հրաժարվում է պատվիրված ապրանքներից, ապա հետ է վերադարձվում ամբողջ գումարը բացի առաքման վճարից:

ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁԸ

- Ապրանքների վաճառքը իրականացվում է տվյալ պահին Կայքում նշված սակագներով:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Գնորդն իրավունք ունի առաքանին ստանալուց հետո 14 օրվա ընթացքում գնման կտրոնի առկայության, Ապրանքի վրա փակցված պիտակները պահպանված լինելու, ֆիզիկական և մեխանիկական թերությունների բացակայության և սարքին վիճակում գտնվելու դեպքում հետ վերադարձնել՝ հետ ստանալով վճարված ամբողջ գումարը բացի առաքման ծառայության վճարից:
- Օնլայն վճարմամբ Ապրանք գնելուց հետո սույն գլխի 3-րդ կետով սահմանված կարգով Ապրանքը հետ վերադարձնելու դեպքում գումարի հետ փոխանցումը կարող է տևել 10 աշխատանքային օր՝ կախված ծառայությունները սպասարկող բանկերի գործընթացների արագությունից:
- Սույն գլխով կարգավորվող հետ վերադարձի կանոնները չեն տարածվում ՀՀ օրենսդրությամբ սահամանված այն ապրանքատեսակների վրա, որոնց համար օրենսդրությամբ հետ վերադարձ նախատեսված չէ:

ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

- Դուք կարող եք այցելել Կայք առանց գրանցվելու, սակայն Կայքի և Ընկերության ամբողջական ծառայություններից օգտվելու համար Դուք պարտավոր եք գրանցվել Կայքում: Անձնական տեղեկությունները հավաքագրվում են (ստացվում են) միայն այն ժամանակ, երբ Դուք դրանք տրամադրում եք գրանցման կամ գնում կատարելու ժամանակ: Գրանցվելիս կամ գնում կատարելիս Դուք պետք է տրամադրեք Ձեր անունը, հասցեն, էլ. փոստի հասցեն և կոնտակտային տվյալները:
- Օգտատերերի վարքագիծը և կայքի օգտագործման հարմարավետությունը վերլուծելու և առավել հարմարավետ ծառայություններ մատուցելու նպատակով, կայքից օգտվելու դեպքում մեզ մոտ կիրառվող մոնիթորինգային և վերլուծական համակարգերին ավտոմատ կերպով կարող են փոխանցվել Ձեր IP հասցեն, բրաուզերի անվանումը, համակարգչի տեսակը, տեխնիկական տվյալներ օգտատերերի վերաբերյալ և մեր կայքի հետ կապ հաստատելու միջոցները, ինչպիսիք

են օպերացիոն համակարգի տեսակը, ինտերնետային ծառայություն տրամադրող կազմակերպության անունը և այլ համանման տեղեկություններ:

- Կայքի օգտագործումը արագ և հարմարավետ դարձնելու նպատակով կայքը կարող է օգտագործել տեղեկանիշներ (cookies): Տեղեկանիշները տառաթվային տողեր են, որոնք ստեղծվում են կայքում: Կայք այցելելիս դրանք կրկնօրինակվում են Ձեր համակարգչի մեջ: Տեղեկանիշները անվտանգ են համակարգչի համար և անձնական տեղեկատվություն չեն հավաքագրում: Անվտանգության նկատառումներից ելնելով դրամային շարժերը և վերջիններիս վերաբերվող տվյալները կարող են վերահսկվել նաև դրամային փոխանցումները սպասարկող բանկերի և համակարգերի կողմից:

- Ընկերությունը ձեռնարկում է պատշաճ էլեկտրոնային, ֆիզիկական և այլ անվտանգության միջոցներ անօրինական մուտքից, փոփոխումից կամ հրապարակումից Ձեր անձնական տեղեկությունների անվտանգությունն ապահովելու համար: Ձեր տրամադրած բոլոր տվյալները պահվում են ապահով սերվերների տվյալների բազայում: Մենք գաղտնաբառերով պաշտպանում ենք Ձեր տրամադրած անձնական տեղեկություններ պարունակող Ընկերության ցանկացած էջ: Ընկերությունը երբեք չի խնդրի նշել Ձեր գաղտանաբառը հեռախոսազանգի կամ էլ. հասցեի միջոցով: Ձեր անձնական տվյալները չենք տրամադրի երրորդ անձանց, առանց Ձեր համաձայնության, բացառությամբ Օրենսդրությամբ նախատեսված դեպքերի (իրավապահ և պետական մարմինների իրենց իրավասության սահմաններում կատարված հարցումներ, դատական հարցումներ և այլն): Մեր կողմից Ձեր տվյալները կարող են հասանելի դարձվել միայն մեզ հետ փոխկապակցված անձանց, այն դեպքերում, երբ այդ տվյալները անհրաժեշտ են Ձեզ մատուցվող ծառայությունները իրականացնելու և դրանց որակը բարելավելու համար: Մենք համագործակցում ենք այլ կազմակերպությունների և/կամ անհատների հետ Ձեր Ծառայությունները պատշաճ մատուցելու նպատակով, ինչպես օրինակ. պատվերների ընդունում, տվյալների բազայի վերլուծություն, մարքեթինգային աջակցության մատուցում, բանկային քարտերով վճարումների իրականացման կատարում և քլիրինգ: Վերոնշյալ անձինք ստանում են անհրաժեշտ տվյալներին հասանելիություն իրենց կողմից նշված գործառնությունների իրականացման նպատակով և իրավունք չունեն օգտագործել նույն տեղեկատվությունը այլ նպատակներով:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄ ԿԱՄ ԼՈՒԾՈՒՄ

- Դուք իրավունք ունեք ցանկացած պահի լուծել Ընկերության հետ կնքված Պայմանագիրը՝ մինչև լուծումը կատարելով Ընկերության հանդեպ ունեցած Ձեր բոլոր վճարային պարտականությունները: Ձեր կողմից ժամկետանց պարտավորության առկայության դեպքում Պայմանագիրը լուծված համարվել չի կարող:

- Պայմանագրի լուծման և arssus.am էջում գործող հաշիվը փակելու նպատակով անհրաժեշտ է անձնական հաշվին կցված էլեկտրոնային հասցեից arssus@mail.ru էլեկտրոնային հասցեին ներկայացնել դիմում Պայմանագրի լուծման և հաշվի փակման համար՝ նշելով հաշվի գրանցման ժամանակ տրամադրած էլեկտրոնային հասցեն, անուն/ազգանունը և հեռախոսահամարը:

Ցանկացած պարագայում մենք սիրով աջակցում ենք մեր հաճախորդներին և մեր մոտից գնված ապրանքներում առաջացած անսարքությունների դեպքում մեր մասնագետները հնարավորության դեպքում կվերանորոգեն և կհանձնեն Ձեզ:

Թարմացվել է՝ 28.11.2022